

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ - ՄԱՐՏ 2016Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՊԱԽՄԱՎ)

Հայաստանի պարենային ապահովության, խոցելիության և սնուցման ամբողջական վերլուծությունը (ՊԱԽՄԱՎ) ներկայացնում է ներկայիս պարենային ապահովության և սնուցման իրավիճակը, ինչպես նաև դրանց զարգացման միտումները՝ սկսած 2008 թվականից: Այն ուսումնասիրում է պարենային անապահովության և թերսնուցման բաշխումը և առաջարկում է ոլորտներ, որոնք կարող են բարելավվել Հայաստանի կառավարության և գործընկերների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում:

2014թ. գրանցվեց Հայաստանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3.5%¹ աճ: Մի քանի տարի շարունակվող տնտեսական վերելքից հետո՝ 2009թ. Հայաստանի տնտեսությունը համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով կրճատվեց 14.1%-ով²: Չնայած դրանից հետո գրանցվել է տնտեսության ամենամյա աճ, ՀՆԱ աճը դեռևս չի վերադարձել նախաճգնաժամային մակարդակ և չի անդրադարձել կարիքավոր բնակչության վրա:

2014թ-ին Հայաստանի գրեթե ամեն երրորդ բնակիչն ապրում էր աղքատության շեմից ցած: Աղքատությունը կտրուկ ավելացավ տնտեսական ճգնաժամի հետևանքով և, չնայած որոշ բարելավման, 2014թ. կազմում էր 30%³: Մինևս այն ժամանակ պաշտոնական տվյալներով գործազրկությունը կազմում էր 18%⁴: Գործազրկության աճը սկսվել էր 2012թ-ից՝ մասնավորապես կանանց ու երիտասարդների շրջանում 2014թ. կազմելով համապատասխանաբար 20% և 37%. վերջինը ազգային միջին տվյալների գրեթե կրկնապատիկն է:

Հայաստանի բազմաթիվ քաղաքացիներ աղքատության ու գործազրկության դժվարին պայմաններում ստիպված են եղել աշխատանքի հնարավորություններ փնտրել երկրից դուրս: Դրամական տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր են բազմաթիվ տնային տնտեսությունների համար և նշանակալի ներդրում ունեն տնտեսության համար: Չնայած նրան, որ տրանսֆերտները 2015թ.⁵ սկսել են նվազել, դրանց բաժինը Հայաստանի ՀՆԱ-ում շարունակում է կարևոր դեր ունենալ (18% 2014թ.):

Մեթոդաբանությունը

Հաշվետվության մեջ ներկայացված արդյունքները հիմնված են առավելագույն 2008–2014թթ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (SSԿԱՀ) վրա: SSԿԱՀ-ը իրականացվում է ամեն տարի՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎՇ) կողմից: Բացի դրանից կատարվել է գրականության հանգամանալի ուսումնասիրություն: Երկրի սոցիալ-տնտեսական վերջին միտումների ու ռիսկերի նկարագրության համար օգտագործվել են երկրորդային տվյալների աղբյուրներ: Սնուցման կարգավիճակի վերլուծությունը հիմնվում է SSԿԱՀ-ի 2014թ. տվյալների և Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2000–2010թթ. ժամանահատվածի հետազոտության վրա:

Պարենային ապահովության պատկերը և այն ներկայացնող սյունները (պարենի առկայություն, մատչելիություն, օգտագործում և կայունություն) օգտագործվել են պարենային ապահովության և սնուցման ցուցանիշները ստանալու համար: Օգտվելով SSԿԱՀ տվյալներից՝ կազմվել են պարենային ապահովության պրոֆիլները՝ հիմք ընդունելով տնային տնտեսություններում սննդի ներկայիս սպառումը (սննդակարգի որակ և քանակ), նրանց բարեկեցությունը և եկամտի աղբյուրների կայունությունը:

¹ Համաշխարհային բանկ, 2015թ.
² Համաշխարհային բանկ, 2015թ.
³ SSԿԱՀ 2014թ.
⁴ SSԿԱՀ 2014թ.
⁵ Արժույթի միջազգային հիմնադրամ/Հայաստան. Նորությունների հաշվետվություն, 2016թ. 4 մարտի 2


ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

ՉՆԱՅԱԾ ԱՆՅԱԾ ՏԱՄՆԱՍՅԱԿԻ ԸՆԹԱՅ-ՔՈՒՄ ԳՐԱՆՅՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆ, ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՆՅԱԾ 5 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՉԻ ՓՈՓՈԽՎԵԼ: ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՊԱՀՈՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՆՈՎ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով կտրուկ սրվել է պարենային անապահովության վիճակը: Չնայած տնտեսական աճին, պարենային անապահով տնային տնտեսությունները շարունակում են կազմել 15%, որը 2008թ.-ի ցուցանիշի գրեթե կրկնապատիկն է: Դրան հակառակ, պարենային ապահով տնային տնտեսությունների թիվը կայուն աճել է: Այս միտումները ցույց են տալիս, որ թեև իրավիճակը բարելավվում է բնակչության մի մասի համար, առավել կարիքավորները մնում են հետևում: Հայաստանում աճող այս անհավասարությունը տեսանելի է նաև սոցիալ-տնտեսական այլ ցուցանիշներում: Օրինակ, եկամտային անհավասարությունը 2008թ.-ի 0.339-ից՝ 2014թ. դարձել է 0.373⁶:

Պարենային անապահով տնային տնտեսություններում չափահաս գործազուրկներն ավելի շատ էին (19%)՝ համեմատած պարենային ապահով տնային տնտեսությունների հետ (11%): Միևնույն ժամանակ պարենային անապահով տնային տնտեսություններն ավելի աղքատ էին, նրանց եկամտի աղբյուրները պակաս հուսալի էին և պակաս բազմազան, իսկ կուտակած պարտքերն՝ ավելի շատ:

Կրթությունը կարևոր նշանակություն ունի պարենային ապահովության համար: Պարենային անապահով տնային տնտեսություններն ավելի քիչ ներդրում էին կատարել կրթության զարգացման համար և ավելի ցածր կրթական մակարդակ ունեին, քան պարենային ապահով և խոցելի տնային տնտեսությունները: Միաժամանակ այդ տնային տնտեսություններն ավելի բազմանդամ էին և ունեին ավելի մեծ թվով խնամքի տակ գտնվող անդամներ: Այս տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են եղել անցած մի քանի տարիների ընթացքում:



Պատկեր 1. Պարենային ապահովության միտումները (2008-2014թթ.):

⁶ ՏՏԿԱՀ 2014թ.

Պարենային անապահովությունը առավել լայն տարածված էր երկրի հյուսիսում: Չորս մարզերում՝ Շիրակում և Լոռիում 17%, Տավուշում 18% և Երևանում 18%, անապահովության տոկոսը գերազանցում էր ազգային միջինը:



Լուսանկարը՝ ՊՀԾ, Լիանա Խառատյան


ԹԵՐՄՆՈՒՑՈՒՄ

ԱՄԲՈՂՁ ԵՐԿՐՈՒՄ 5 ՏԱՐԵԿԱՆԻՑ ՓՈՔՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ Է ԹԵՐՄՆՈՒՑՄԱՆ ԿՐԿՆԱԿԻ ԲԵՌ՝ Ի ԴԵՄՍ ԹԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՐՔԱՇՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԵԾ ԹՎԻ

2014թ. 5 տարեկանից փոքր երեխաների 19%-ը թերաճ (տարիքի համեմատ կարճահասակ) էր, իսկ 15%-ը՝ գերքաշ: Գյուղական վայրերի երեխաների շրջանում թե՛ թերաճությունը և թե՛ գերքաշությունը նվազման միտում ունեին, մինչդեռ քաղաքային վայրերում երկու ցուցանիշներն էլ աճում էին: Երևանից դուրս այլ քաղաքային վայրերում թերաճ էր երեխաների 22%-ը, գերքաշ՝ 17%-ը:

Երեխաների թերաճությունը զգալիորեն պայմանավորված էր տնային տնտեսության աղքատությամբ, սննդի ոչ պատշաճ սպառումով, ոչ պատշաճ խնամքով և կերակրման եղանակներով, ինչպես նաև՝ մայրերի կրթության ցածր մակարդակով: Գերքաշության տարածումը նույնն էր թե՛ աղքատ և թե՛ ունևոր տնային տնտեսություններում, ինչը հիմնավորում է առողջ սնվելու և առողջ կենսակերպի մասին ամբողջ բնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:

ՑՆՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԹՐԵՄՆԵՐ



Գերքաշ երեխաների դեպքում առավել հավանական է, որ նրանք չափահաս կյանքում ևս գերքաշ կլինեն, ինչը հանրային առողջապահական լուրջ խնդիր է: Արդյունավետ քաղաքականությունների մշակմանն օժանդակելու համար հարկավոր է բարելավել ազգային տվյալների հավաքագրումը, ինչը կօգնի հասկանալ գերքաշության տարածումն ու պատճառները:



Սննդարար միկրոտարրերի անբավարարությունը ազդում է թերսնուցման ու պարենային անապահովության վրա: Ներկայումս իրականացվող հետազոտությունը կներկայացնի այդ երևույթի տարածումը Հայաստանում⁷: Անցած տարիների տվյալները⁸ ցույց տվեցին, որ պարենային անապահով տնային տնտեսությունները երկաթով հարուստ սնունդ զգալիորեն ավելի քիչ են սպառել, ինչը ևս մեկ անգամ ազդարարում է սննդարար ու բազմազան սննդակարգի կարևոր նշանակության մասին:

ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ: ԵՐԿՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆԸ ՄՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՄԵԿ ԿԱՄ ԱՎԵԼԻ ՌԻՍԿԵՐ

Վերջերս տեղի ունեցած համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական ճգնաժամերը շրջեցին Հայաստանի աղքատության նվազեցման ձեռքբերումները՝ մղելով բազմաթիվ կարիքավոր տնային տնտեսությունների աղքատության շեմից ցած: Այս ազդեցություններն ընդգծում են Հայաստանի կախվածությունը արտաքին տնտեսություններից և համաշխարհային տնտեսության ցնցումների նկատմամբ երկրի ընդհանուր խոցելիությունը: Ռուսաստանի ճգնաժամը և համաշխարհային տնտեսության անկայունությունը խոչընդոտում են Հայաստանի զարգացումը և սպառնալիք են ստեղծում երկրի պարենային ապահովության համար:

Հայաստանը ցնցումների նկատմամբ խոցելի երկիր է, որտեղ բնակչության մեծամասնությանը սպառնում են մեկ կամ ավելի տեսակի բնական աղետներ: Տնտեսական ազդեցության իմաստով ամենաուժգինը երկրաշարժերն են: Ավելի պակաս ազդեցությամբ, սակայն առավել հաճախակի ցնցումներ են հանդիսանում կարկուտները, ցրտահարությունները, հեղեղումները, սողանքները և երաշտը: Նշվածից զատ, Հայաստանը ենթակա է մարդածին աղետների, որոնցից են արդյունաբերական պատահարները և տարածաշրջանում գոյություն ունեցող քաղաքական լարվածության մեծացումը:

ԵՐԿՐԻ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎՍՈՒՏՔՆ ԱՎԵԼԻ ՌԻՍԿԱՅԻՆ Է ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ: ԹԵ՛ՂԱՐԵՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵ՛ԹԵՐՄՆՈՒՅՈՒՄՆ ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՏԱՐԱԾՈՒՄ ՈՒՆԵՆ ԱՅՂ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Քարտեզում պատկերված է բնական աղետների ռիսկերի և բնակչության խտության (թանաքագույն նշումով) համակցությունը, որի վրա պարենային անապահովության շերտն է (կարմիր ուրվագծով) և երեխաների թերսնուցումը (ցանցկեն պատկերով): Պարենային անապահովության և թերսնուցման (թե՛ թերաճության և թե՛ գերքաշության) մակարդակները բարձր են Լոռիում և Շիրակում: Այստեղ մեծ են նաև բնական աղետների ռիսկերը: Բացի դրանից, այս մարզերում մեծ է նաև աղքատությունը:

⁷ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2015թ.

⁸ ՏՏԿԱՀ 2008-14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում մշակվել են պարենային ապահովության և սնուցման կարգավիճակի բարելավմանն ուղղված բազմաթիվ քաղաքականություններ և ծրագրեր, որոնք համահունչ են հիմնարար ռազմավարական ծրագրերին, այդ թվում՝ ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին և Միավորված ազգերի կազմակերպության 2016-2020թթ. Զարգացման աջակցության ծրագրին:

Պարենային ապահովության, սնուցման բարելավման, ինչպես նաև տնային տնտեսությունների առաձգականության բարձրացման նպատակով կատարվող հետագա ջանքերն անհրաժեշտ է ներդնել հետևյալ ուղղություններով՝

- մշակել և իրականացնել պարենային ապահովության և սնուցման բարելավման համապարփակ քաղաքականություն՝ կիրառելով կյանքի պարբերաշրջանի սկզբունքը և հաշվի առնելով պարենային ապահովության երեք հիմնարար գործոնները՝ առկայություն, մատչելիություն և գրագետ օգտագործում,
- միջոցներ ձեռնարկել նվազեցնելու քաղաքային խոցելիությունը և խիստ անհավասարությունը,
- բարձրացնել պարենային ապահովության մակարդակը բնակչության շրջանում՝ ներդրումներ կատարելու ՎԻՄԻՍՈՎԻՍ ԲԻՆՎԵՆԻՍԻ ԿՈՄԻՏԵի կողմից ընդունված ԿԵՍՏՄԱՆԻ ՄԻՋՆԵՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵի շրջանակներում,
- վաղ հայտնաբերման միջոցով նվազեցնել թերաճության ռիսկերի մակարդակը և միջոցներ ձեռնարկել գերքաշության դեմ պայքարի համար՝ բնակչության տեղեկացվածությունը բարձրացնելու միջոցով,
- ջանքեր ներդնել արտակարգ իրավիճակների նկատմամբ պատրաստվածության ուժեղացման և աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ,
- ուժեղացնել պարենային ապահովության և սնուցման փաստական հիմքերը և ոլորտների համակարգում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝

ՀՀ ԱՎԾ, հեռ.՝ +374 (11) 524326, էլ-փոստ՝ info@armstat.am

Էլմիրա Բախշինյան, ՊՀԾ/Հայաստան, հեռ.՝ +374 (10) 580538, էլ-փոստ՝ elmira.bakhshinyan@wfp.org

Միհրան Հակոբյան, ՅՈՒՆԻՍԵՖ/Հայաստան, հեռ.՝ +374 (10) 523546, էլ-փոստ՝ mhakobyan@unicef.org